

ԱՄՌԻՍՆԱԿԱՆ ՋՈՒՅԳԻ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՄԱՐԺԵՐՆԵՐԸ
ՀԱՅՈՑ ՀԱՐԱՄԱՆԻՔՈՒՄ

1. Հայոց ամուսնա-հարսանեկան որոշ ենթատեքստերում հարսնացուն համար նույնացվում է որևէ էգ կենդանու հետ: Ըստ որում, դա արվում է աներկմի՞թ կերպով և միանշանակ էլ ընկալվում է ծիսական տվյալ իրավիճակին մասնակից անձանց կողմից: Տալուշում ամուսնության առաջարկով աղջկա հորը դիմող միջնորդն ասում էր. «,էս մարթը /մատնացույց անելով տղայի հորը/ սարիցը կյալիս մի հերինը ա կորցրել, բալքի խըոնըվել ա բու նախրին», և խնամախոսությանը ներկա բոլորին հասկանալի էր, որ մատնանշվում է տանտիրոջ աղջիկը: Լոռիում հարսնայաց խնջույքի սեղանին անմասն մնացող փեսային աները որևէ նվեր էր խոստանում, ի լուր ամենքի հայտարարելով. «,Տալիս եմ իմ փեսին մի անծին էրինը», կամ «,Տալիս եմ փեսին մի լավ անցընզնիլ քեհալան մադեան /էգ ձի/»: Ներկաները գիտեին, որ նա ակնարկում է հարսին և պահանջում էին, որ աներն իրապես որևէ բան նվիրի փեսային՝ որպես «,բերանբացք»:

«,Ընդհանրական փոխանակության» համակարգում կանայք ոչ միայն որոշակի նշանների դեր են կատարում, այլ հենց իրենք էլ դառնում են նոր նշանների ստեղծման հիմք /Վ.Լևի-Ստրոս/: Հայոց էթնիկ միջավայրում հարսնացուի ընկալումը որպես «,երինը» կամ «,զամբիկ» ենթադրում է նրա գուգընկերոջ՝ փեսացուի կենդանական /ոչ մարդեղային/ համարժեքի առկայությունը:

2. Հիմն շղեզնածորի շրջանում մինչև օրս էլ գոյավարում է հարսանիքի մացուն մորթելու ծիսական կարգը, որի բազում նկարագրություններ հայտնի են Հայաստանի գրեթե բոլոր պատմամշակութային շրջաններից: Այս սովորույթի «,ծզն մորթել» անվանումը թյուրիմացության մեջ է գցում հարսնայաց ծեսն ուսումնասիրողին, բնագի իրականում մորթվում է ոչ թե ծզ-լծկան, այլ ուրիշ որևէ անասուն, սովորաբար՝ արջառ /այսինքն՝ տակավին ոչ լծկան, մատղաշ/:

Նման իրողությունն ինքնին վկայում է, որ անվանումը և բուն գործողությունը որպես ծեսի մասին տեղեկացող անհրաժեշտ նշանային հնարներ /Ա.Բալբեղրին/՝ բավարար չեն. լիարժեքորեն բացահայտելու սո-

վորույթի էությունը: Այստեղ վճռորոշ դեր ունի սովորույթի նախնական հորինվածքի առանցք հանդիսացող կերպարը, որ և հարսանյաց ծեսի կենտրոնական դեմքն է՝ փեսան:

Ամուսնացող երիտասարդը հարսանյաց ծեսի սրբազան իմաստային ոլորտում ընկալվում է իբրև ,,հերոս'', որի խորհրդանշական ժամանակավոր մահվանը հետևում է երկրորդ ծնունդը: Փեսացու-հերոսին ծեսում փոխարինում և որպես նրա նշանային կրկնակ հանդես է գալիս մորթվող անասունը /հմտ. մարդկային զոհի փոխարինումը կենդանականով՝ Հին Հնդկաստանում և հնդեվրոպական այլ էթնոմշակութային ավանդույթներում/: Ըստ որում, էականն այն է, որ հայոց հարսանիքում իրականում մորթվում է արջառ, իսկ երբեմն էլ՝ խոյ: Ժիսական այս համարժեցությունը կաղապարված է և քնական լեզվում. հայ. առն՝ 'խոյ', քայց և՛ 'արու, տղամարդ', սանսկր. vṛṣabha - 'առասպելական ցուլ', քṣabha - 'արու' և այլն: Այդ համարժեցությունը հավաստվում է նաև լեզվական որոշ տեքստերով, ինչպես՝ ամուրիների ամուսնությունն ակնարկող. ,,Ե՞րբ ենք մոզին գետին զարկում'', կամ՝

,,ՀԸԸԸ մոզին գետին չե՞ք զարկել''/գետին զարկել նույնն է՝ մորթել/: իսկ դարձյալ ամուսնությունն ակնարկող. ,,Ե՞րբ ենք անգամըտ կտրում'', ,,Անգամըտ դո՞ւ չե՞ս կտրել'' ու համանման այլ խոսքերի մեջ դիտելի է ոչ միայն փեսայի ծիսական մահվան, այլև նրա զոհաբերման զաղափարը /կտրում - նշան են անում մատաղացուի ականջը/:

Փեսայի ժամանակավոր մահը ծեսի հորինվածքում ընկալվում է իբրև սեռական մահ, որ լավագույնս դիտելի է նրան սափրելու ծեսում: Բայց հատկապես այդ է մատնանշում հիշյալ սովորույթի ,,Եզն մորթել'' անվանումը: Եզն ամորժատված կենդանի է, ուստի փեսայի և եզան մտովի խոստ ալդմ և՛ լեզվական-անվանական/ նույնացումը ենթադրում է նաև փեսացուի առնականության ժամանակավոր կորուստ, որ վերագտնվում է առաջատի պարագային: Դրա ապացույցը մորթվող անասունի արյամբ դանակ կամ կողպեք փակելու, թել կապելու և ապա՝ առաջատ մտնելուց անմիջապես առաջ՝ նորապսակների անկողնու վրա դրանք բացելու և արձակելու հայտնի սովորույթն է:

3. Եթե հարսի ծիսական համարժեքը հայոց ավանդութային հարսանիքում երինջն է կամ զամբիկը, ապա փեսայի կերպարը ներկայանում է եզ, արջառ, խոյ նշանային համարժեքների մեջ: Ըստ երևույթին, ծիսական մրտածողության այս կաղապարն է գործում նաև արդի հարսանիքում /հատ-

կապես քաղաքային/ խաղալիք - արժի՝ որպես փեսայի խորհրդանիշ հանդես
գալու մեջ:

Է.Կ.ԽԱՌԱՑԻԴԻՍ

ՊԼՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՎԱՐՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

1. Արևելյան Հայաստան ներգաղթելուց հետո հույները, 200 տարի
հայերի հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվելով, նյութական և
հոգևոր մշակույթի ասպարեզում կրել են որոշակի փոխազդեցություններ:
Ստորև փորձ է արվում լուսաբանելու հույների օգտագործած երկրագործա-
կան գործիքների առանձնահատկությունները, վարող գործիքների համալիրը,
որը հիմնականում փոխառնված լինելով տեղի հայ քնակչությունից, նրանց
արտադրական կենցաղից, իր մեջ, այնուամենայնիվ, պարունակել է հունա-
կան նույն կենցաղի տարրեր, որոնք գուգահեռաբար անվանվել են նաև
հունական տերմիններով:

2. Հողամշակման գործիքների համալիրի մեջ մտել են տարբեր գոր-
ծիքներ, որոնք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ լծասարքի
գործիքների և ձեռքի գործիքների: Լծկանով վարող հիմնական գործիքնե-
րից են արորը, որ հույները անվանել են չիֆթ, ալետր, և մեծ գուլթանը՝
կարակոթան, մավրոն կոթան: Զիֆթ /թուրք. çift - գուլյգ եզակուծ/
տերմին օգտագործել են Լոռվա հույները /Մադան, Շամլուղ, Ցաղղան, Կո-
ղես գյուղերում/: Հանքավանում /նախկին Նովո-Միխայլովկա, Միսխանա
գ./ արորը ալետր է կոչվել /հուն. *πόζιτρον* - արոր/: Դաշտային ագ-
գագրական նյութերը ցույց են տալիս, որ նման տերմիններով հույներն
անվանում են ոչ առանձին վերցրած գործիքները, այլ տվյալ գործիքը
ողջ կազմով, այսինքն՝ արորն ու գուլյգ անասնալուծը միասին: Շամլու-
ղում և Մաղանում արորին լծել են ձիեր:

Հույների օգտագործած ալետրն ունեցել է արորից ավելի մեծ չա-
փեր և կառուցվածքային որոշակի տարբերություններ: Դրան լծել են եր-
կու կամ երեք լուծ եզ: Այն համապատասխանել է ավելի հայկական վեց-
կին, չորոցին:

3. Մեծ գուլթանը կամ մավրոն /հուն. սև/, կարա /թուրք. սև/ կո-